

ԳԼԽԱՀԱՐԿՐ ԹՈՒՐԲՈՒՅՈՒՄ XVII—XVIII ԴԱՐԵՐՈՒՄ
ՀԱՅ ՊԱՏՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ

ԹԱԿ. ԱՎԴԱԼԹԵՅԱՆ

Գլխահարկը նոր հարկ չէ: Նա և՛ լի և՛ պատմական զանազան ժամանակաշրջաններում ու
քաղաքային պետությունների մեջ:

Ասիական այն երկրներում, որ նախորդ պետություններից նվաճել էր Տաճկաստանը, սա
գլխահարկը ժառանգություն ստացավ խարաջ անունով:

Հայ մատենագիրներն ու հիշատակարաններն էլ խարաջ ասելով ընդհանուր առմամբ գրի-
խահարկն են հասկանում:

«Թվին 258 (1308) ի գաւառն Մշոյ Ղարապանտայ խանն հրովարտակ եհան ի վերայ քրիս-
տոնէիցն, որք ընդ իշխանութեամբ իւր էին. կամ դառնալ ի մուլար օրէնսն Մահմէդի և կամ
տալ խարաջ ամէն մարդ իւրոյ զլիսոյն»¹:

«Որովհետև եզերեաց երկիր է Ղարս և ծայր սահմանի իւրոյ տէրութեան, հրամայեցէ զի
ընակիչ հայք Ղարսայ լիցին ամենայնիւ վստահ ի մէջ տաճկաց ի հանդերձսն, ի զէնս, ի յերի-
վարս և ապահով քան զայլ քաղաք և թեթև ի հարկս արքայական և ի գլխահարկս, որ խա-
րաճ ասին»²:

«Ի ՌԾԸ և Թ (1609—1610) թվոյ հայկազեան... հաճեալ թագաւորին առաքէ նմա հրովար-
տակ մեծ, զոր կոչեն Ղէադդի հիւմէին, այսու հրամանաւ... ընակիչք Ղարսայ հայք լիցին վրս-
տահ քան զայլ աշխարհս, ի հանդերձս, ի զէնս և թեթև ի հարկս և տացեն զգլխահարկս, այս է
գլխարաճս...»³:

Հարկային ուրիշ շատ տերմինների նման խարաջ բառն էլ ժամանակի ընթացքում նոր
առումներ է ստանում՝ փոխանցվելով հարկային այլ գաղափարների: Այսպես, օրինակ, նույն
Տաճկաստանում խարաջ անվանվում էր հողահարկն էլ, որի հետևանքով հողահարկի ենթակա
հողերը կոչվում էին խարաջի՝ տարբերվելով աշար (տասանորդ) վճարող հողերից, որոնք այս
բառով կոչվում էին ուշրիբ⁴:

Այս պարագայում խարաջին զուգահեռ կամ թե հենց խարաջի փոխարեն, հատկապես Պարս-
կաստանում, գլխահարկի իմաստով սկսում է գործածվել ջիզիե տերմինը:

1 խարաջ կամ խարաճ արարելուն բառ է (Հրաչյա Աճառյան, Հայերեն արմատական բա-
ռարան, Գ հատոր, էջ 407): Արդի թուրքերենում ասվում է հարաջ (Д. А. Магазинск,
Турецко-русский словарь, под ред. В. А. Гордлевского. Москва, 1931, էջ 384): Ըստ
Patrubany-ի (Աճառյան, ibid) այս բառը մտել է հունգարերենի մեջ haraes ձևով:
Ա. Կրիմսկու ասելով նույն այս բառն անցել է լեհերենին էլ haraez ձևով՝ հենց գլխա-
հարկի իմաստով («Энциклопедический словарь Брокгауза—Эфрона», т. 73, էջ 62):
Սխալվում են այն հեղինակները, որոնք կարծում են, թե խարաջ բառը թուրքերեն բառ է:

2 «Դիվան հայոց պատմության», գիրք Ժ, Մանր մատենագրք, Թիֆլիս, 1912, էջ 59 (Գրի-
գոր դպիր՝ Ղարազեցու տարեգրություն):

3 Նույն տեղում, էջ 458:

4 Նույն տեղում, էջ 457 (Իսահակ Սահրապյանի տարեգրություն):

5 Лавис и Рамбо, История XIX века, Москва, 1906, т. VI, ч. II, էջ 43:

6 Նույն տեղում, էջ 43: Ջիզիե նույնպես արաբերեն բառ է (Магазинск, Русско-
тур. словарь, էջ 179):

Քեկ համեմատաբար սակավադեպ, բայց և այնպես այս հարկային տերմինն էլ ենք գործածված գտնում հայ մատենագրության մեջ՝ արևմտահայ ճեզիե ու արևելահայ չազիա տառադարձությամբ¹:

Այսպես, Աբրահամ Կրետացու «Պատմագրության» մեջ 1735 ու 1736 թվականներին վերաբերող էջերում կարդում ենք.

«Զի լինի, թի նեղացնէր զազգս հայոց կամ վնասէր, զի զայնպիսին պատուհասակոծ առնեմ, և բաց ճիզիլէն զամենայն հարկս դիւանին հաւասար տայցեն, զինչ և պատահիցի, զկէսն հայ և զկէս՝ ղզլպաշը»²:

«Վասն ճիզիլին, զոր շատ պահանջէին, խնդրեցին առաջին սահմանին՝ տնով մարդու գողոչ և կէս»³:

«Եւ ես սրտապնդեալ արգ արարի մեծի վալինամաթին... վասն ճիզիլին»⁴:

Իսկ Սիմեոն Երեանցին «Ջամբու»-ում գրում է.

«Այս ժժ՝ վանքերս ի նախնեաց հետէ թէ չազիայի ու թէ այլ խարջի կողմանէ մին խալամ ի տարին մի անգամ կաթողիկոսի ձեռքն ժէ թուման և հինգ հազար դիւան մալուխհատ անուամբ տուեալ են յարքունիս»⁵:

«Արդ վերոյ ասացեալ ժժ՝ վանօրէից աղազաւ գրին, թէ որ վանօրայքս և իւրեանց միութանքն ի չազիայից և յայոց հարկաց մաղաֆր են»⁶:

«Փորը Շահ-Ապասին ռազամ, յորում նախ շխ-խալամն գրէ, թէ արծաթազին ժառային չազիայ և խարճ ոչ գոյ»⁷:

XIX դարում խարաջ ու չիզիե հարկերի տեղը բռնում է մի այլ հարկ՝ բեզելիե իսկերիեն, զինվորական հարկու բեզելիե իսկերիե կամ բեզելի ասկերի նշանակում է զինվորության փոխարեն, զինվորության փոխարժեք⁸: Այս հարկը վճարող ոչ-մուսուլման հարկատուներն ընդհանուր բառով կոչվում էին բեզելիչիներ, այսինքն զինվորական հարկ վճարողներ⁹: Բեզելիե իսկերիեն փաստորեն միևնույն խարաջը կամ չիզիեն էր, միմիայն անունն էր փոխվել:

XVII—XVIII դարերում, որ մեր ուսումնասիրության ժամանակաշրջանն է, զխահարկի դրույքները մեր մատենագիրների կողմից հիշատակվում են տարբեր դասերով: Երբեմն-երբեմն զխահարկը մեջ է բերվում ոսկով:

«Թվին Ռշն (1625—1626) օսմանցիք Դ ոսկի խարաջ առին ի հայոց»¹⁰:

«Ռճն (1690—1691) սուլթանն Սուլեյման առաքեաց վօյվօյտա ի քաղաքն Վան, որ Եկեալ... քաղաքի խարաջն... ժողովեաց մէկ Ռկ ոսկի»¹¹:

Վերոգրյալի համաձայն, խարաջի դրույքը տատանվել է 3 ոսկուց մինչև 1 ոսկի: Երկրորդ աղբյուրը հիշում է ոսկու այն ժամանակվա կուրսն էլ, թե «մէկ մէկ ոսկի, որ է Երկու դուռուշ կէս»¹²: Ըստ այսմ 3 ոսկին կանի $7\frac{1}{2}$ դուռուշ: Նշանակում է՝ հիշյալ աղբյուրների ասելով զխահարկ գանձվել է $7\frac{1}{2}$ դուռուշից սկսած մինչև $21\frac{1}{2}$ դուռուշ:

Բայց մենք ունենք վկայություններ հենց զուռուշով էլ:

1 Աճառյանի Արմատական բառարանը, որ տալիս է վերջին դարերի մատենագրության բառերն էլ, չունի այս բառը ոչ չազիա ու ոչ էլ ճեզիլ ձևով:

2 Արաբաձաճ կաթողիկոս Կրետացի, Պատմագրութիւն անցիցն իւրոց և նատիր շահին, Վաղարշապատ, 1870, գլ. ԺԸ, էջ 24:

3 Նույն տեղում, գլ. ԽԲ, էջ 24:

4 Նույն տեղում, էջ 66:

5 Սիմեոն կաթողիկոս Երեանցի, Ջամբու, Վաղարշապատ, 1873, գլ. ԺԴ, էջ 144:

6 Նույն տեղում, էջ 145:

7 Նույն տեղում, գլ. ԺԵ, էջ 215:

8 Բեզելիե իսկերիե տերմինն էլի արաբերեն է (Mazazunsk, էջ 122—123):

9 Mazazunsk, էջ 123, «Bedelei»:

10 Դիվան, Ժ, էջ 62 (Գրիգոր դպիր Վարազեցի). Առաջին վաղապետ Դավիթբեկի. Պատմութիւն, Վաղարշապատ, 1884, գլ. ԾԵ, էջ 494:

11 Դիվան, Ժ, էջ 114 (սկսած Վասպուրական աշխարհի):

12 Նույն տեղում:

«Ի թվ. Ռեֆ (1594—1595) ի քաղաքն յԱմիթ... ի դառն և ի նեղ ժամանակիս... հարկապահանջութիւն շատացել էր ի վերայ բրիստոնէիցն. մէկ խարաջ մի Գ. Դ. դուրիշ կառնէին»¹:

Գլխահարկի այս քանակը պետք է համարել նրա մոտավորապես միջին դրույք, որից հետագող խոշոր շեղումներ գտնում ենք երկու ուղղությամբ էլ, թե դեպի վեր ու թե դեպի ցած։ Այսպես, տարեգիրները հիշատակում են նույնիսկ 10 դուռուշի հասնող գլխահարկ։

«Ռճեֆ (1691—1692). և դարձեալ ի սոյն ամի Իսմայիլ փաշայն տասն-տասն դուռուշ խարաջ էառ»²:

Սրա հակառակ եղել են նաև այնպիսի դեպքեր, երբ պետական նկատառումներով այս կամ այն վայրի բնակչության գլխահարկը թիթեացրել են՝ հասցնելով մինչև անգամ կես դուռուշից էլ ցած մի դրույքի։

«Ի ՌԵԸ և Թ թուոջ հայկազեան (1608—1610) հաճեալ թագաւորին... առաքէ հրովարտակ մեծ այսու հրամանաւ... բնակիչք Ղարսայ հայք լիցին վստահ քան զայլ աշխարհս ի հանդերձս, ի զէնս և թեթև ի հարկս և տացեն զգլխահարկս, այս է զխարաճս իւրաքանչիւր արու ժՁ փարս, որ է եղեալ յայնժամ մեկ ապասի Տփիսիսայ. զոր հրաման կայր ի ժամանակս մեր այն 1 մինչև ի թվական հայոց ՌՄԿ (1810—1811) և նշնուհետև բարձաւ այդ կանոն, թէ և ոչ աւելի, քան զայլ երկիր Օսմանեան»³:

Եթե մտաբերենք, որ դուռուշն ունի 40 փարա, ապա կտեսնենք, որ բերված օրինակներում գլխահարկի դրույքների տատանումները շատ մեծ են. մինչդեռ եղել է ժամանակ, երբ, օրինակ, վանում գլխահարկ գանձվել է 10 դուռուշ կամ 400 փարա, ապա նույն միջոցին կարսում, որ նույնպես տաճկական նահանգ էր, առնվել է մարդագլուխ 16 փարա, այսինքն ուղիղ 25 անգամ ավելի քիչ։

Որովհետև տաճկական գլխահարկի պատմության ուրվագիծը տալը չէ մեր նպատակը, որի համար անհրաժեշտ էր հանգամանորեն ծանոթանալ այն հարցերի վրա, թե երբ, որտեղ, ինչ պարագաներում ու ինչ փոփոխություններ է կրել գլխահարկը հիշյալ պետության մեջ, ուստի մենք բավականանում ենք գլխահարկի դրույքների վերահիշյալ թուուցիկ նմուշներով, որպեսզի անցնենք տաճկական գլխահարկի մի քանի կարևոր հատկանիշներին, որոնք մինչև այժմ շոշափված չեն եղել մեր տնտեսագիտական գրականության մեջ⁴:

Մինչև հիմա մեր բերած օրինակներում գլխահարկը մի որոշ ու կտրական գումար էր, որ գանձվում էր միանվագ կամ վճարվում էր մի անգամից։ Պայմանաբար այսպիսի գլխահարկն անվանենք հիմնական գլխահարկ և շարունակենք մեր պրպտումները։

Մեր տարեգիրներից ու հիշատակարաններից մեկ երկուսը մի քանի շատ կարևոր տեղեկություններ են թողել մեզ, որոնցից իմանում ենք, թե Տաճկաստանում, բացի հիմնական գլխահարկից, երբեմն գանձվել է նաև յրաքույրիչ գլխահարկ կամ թե ավելի ճիշտ ասած՝ ավելագիր գլխահարկ։

Վերևում մենք տեսանք, որ հիմնական գլխահարկը կարսի նահանգի շատ թեթև շնչահարկը չհաշված, տատանվում էր 10-ից մինչև 21/2 դուռուշ։ Ավելագիր գլխահարկը կարող էր լինել

¹ Մակառ Լաս, Բուրխուդարյանց, Առդախ, Բաքու, 1893, էջ 345—346:

² Դիվան, Ժ, էջ 115 («Անցք Վասպուրական աշխարհի»):

³ Նույն տեղում, էջ 458 (Իսահակ Սահրատյանի տարեգրություն):

⁴ Մենք հատկապես անհրաժեշտ համարեցինք Տաճկաստանի գլխահարկի մասին քանակական կոնկրետ տվյալներ մեջ բերելը մանուփառ այն պատճառով, որ Եվրոպայի հարկային հարաբերություններն ուսումնասիրողներն անգամ հաճախ լուր հավաստում են գլխահարկի դոյուլթյունը՝ առանց դրազվելու այս հարկի քանակական փերլուծությամբ։ Այսպես օրինակ, պրոֆ. Н. М. Кулишерը միջնադարյան Արևմտյան Եվրոպայի մասին գրում է. «Среди этих повинностей на первом плане стояли различные поголовные платежи (clevage, capitation) — признак несвободного состояния». («Лекции по истории экономического быта Западной Европы», ч. I, Петроград, 1922, էջ 90): Քանակի մասին ոչ մի խոսք։ Մինչև հեղափոխական Ֆրանսիայի մասին Е. В. Тарле-ն պատմում է. «Со времен Людовика XIV прибавился новый налог-капитация, т. е. будто бы поголовная, подушная подать... Эта капитация для дворян все уменьшалась и... сократилась на 5/6 своей первоначальной величины, а для крестьян... увеличилась в десять раз». «Крестьяне и рабочие во Франции в эпоху великой революции», Петроград, 1919, էջ 19—20: Գլխահարկերի բուն քանակների մասին դարձյալ ոչ մի խոսք։

անշուշտ համեմատաբար ավելի փոքր գումարով: Այս մասին մենք վկայություններ ունենք թե XVII ու թե XVIII դարերի վերաբերմամբ:

Հարություն խալֆայան անունով տարեգիրը XVII դարի մասին հաղորդում է.

«ԹՃԽԹ (1699—1700)... կրկին հայոց մարդագլուխ մէկ ղուռուշ խարաջի կոտոր ժողովեցին դավթարով»¹:

Այստեղ ավելադիր գլխահարկը, որ գանձվել է մարդագլուխ մեկ ղուռուշի չափով, կոչվում է «խարաջի կոտոր», այսինքն գլխահարկի կտոր, գլխահարկի մաս:

Նույն տարեգիրը XVIII դարի մասին հիշատակում է.

«ԹՄԻԱ (1771—1772)... երկու խարաջ առին հայոց. կէս ղուռուշ էլ խարամ խառաջ»²:

Այս հատվածի «երկու» բառից հետո կարելի էր հարցանիշ դնել հետևյալ նկատառումներով: Կարող է «երկու» բառի մոտ բաց թողնված լինել ղուռուշ բառը. այս դեպքում ուրեմն հիմնական գլխահարկը կաներ 2 ղուռուշ, իսկ ավելադիր գլխահարկը՝ 1/2 ղուռուշ կամ հիմնականի 25 տոկոսը: Բայց կարելի է ընդունել նաև, թե տարեգիրն ուղում է ասել, որ գանձել են երկու գլխահարկ, երկու տեսակ գլխահարկ, նախ՝ բուն գլխահարկն ու հետո էլ սրանից զատ մի նոր գլխահարկ 1/3 ղուռուշի չափով:

Մեզ թվում է, թե ավելադիր գլխահարկի հիշատակություն են պարունակում նաև հետևյալ հատվածները.

«ԹՃԽԷ (1697—1698). ի սոյն թվին Թոխմախ րուս Միրաքն զասնաֆի ավելորդ գլխահարկն դավթարով սահմանեալ հաստատեաց, որ ամենայն որ թէ ուստաբար և թէ ռամիկ տացլ զխարաջն րոստ դիպման աւուր և ժամանակի»³:

ԹՃԿԸ (1718—1719)... եկն Հաճի Ալի փաշայն. սա ավելի խարաջ մ'էառ ի հայոց»⁴:

Վերահիշյալ քաղվածքներում ավելադիր գլխահարկը կոչվում է «ավելորդ գլխահարկ», «ավելի խարաջ մ'», «խարաջի կոտոր» ու «խարամ խարաջ»: Մինչդեռ առաջին երեք անունն անտարբեր որակումներ են, վերջինը «խարամ խարաջ», այսինքն հարամ խարաջ, ապօրինի գլխահարկ, ցայտուն ներկայացնում է ժողովրդի հայացքն ինչպես հիմնական, այնպես և ավելադիր գլխահարկի վերաբերմամբ:

Հիմնական գլխահարկը ժողովրդի աչքում օրինական, հալալ խարաջ էր, այնինչ ավելադիր գլխահարկը՝ ապօրինի, հարամ խարաջ:

Հարկային ժողովրդական տվյալ տերմինը որոշակի ցուցանում է հարկատու ժողովրդի վրդոված հոգեբանությունը (чёрну́бод, կարա-կոնակ):

Ավելադիր գլխահարկին վերաբերող հատվածներից մի երկուսում երևան է գալիս մի նոր բառ, որի ինչ լինելն անհրաժեշտ է պարզել:

«ԹՃԽԸ (1698—1699)... ի սոյն թուին յաւուրս Ալի փաշային մարդագլուխ մէկ մէկ ռուպի խարաջի կոտոր ժողովեցին»⁵:

Մի ուրիշ աղբյուր նույն թվականի մասին գրում է.

«ԻՃԽԸ (1798—1799), Վանայ կուլ մարդագլուխ ԲՆՄ առեց հայոց»⁶:

Այս «ըռմ» բառը, որ «Դիվանի» հրատարակչի կամ թե ուրիշ որևէ մեկի կողմից չի վերծանված, մեր կարծիքով պետք է համարել նույն ռուպ կամ ռուպ բառը, և հատվածը կարդալ այսպես.

«Վանայ կուլ մարդագլուխ ըռ(ուպ) մ'առեց հայոց»:

¹ Դիվան, Ժ, էջ 126:

² Նույն տեղում, էջ 143:

³ Նույն տեղում, էջ 118 («Անցք Վասպուրական աշխարհի»):

⁴ Նույն տեղում, էջ 129—130 (Յարութիւն խալֆայան ժամանակագիր):

⁵ Նույն տեղում, էջ 118 («Անցք Վասպուրական աշխարհի»):

⁶ Նույն տեղում, էջ 126 (Յարութիւն խալֆայան ժամանակագիր): Որովհետև նույն տարեգրի մի ուրիշ պարբերություն մեջ ձեռնարկին թանգություն դնելի շարքում պատահում է «Արճէշ քաղաքն մէկ լիար փթիրն ըռու եղև» խոսքը («Դիվան», Ժ, էջ 128), որտեղ «ըռուպ» բառի փոխարեն գրված է «ըռու», ապա այս հիմք է տալիս կարծելու, թե զուցե բառը հենց այսպես էլ է արտասանվել, եւթեմն և վերելի հատվածը կարելի է վերծանել նաև այս կերպով.

«Վանայ կուլ մարդագլուխ ըռու մ'առեց հայուց»:

Արդ, ի՞նչ բան է այս «ոռույ»-ը:

Ռուս արարներն էլ և նշանակում է քառորդ¹:

Մեր դրականության մեջ այս բառը, բացի «ոռույ» ձևից, որ տալիս է Աճառյանի «Արմատականը», գործ է ածվել նաև ուր, ոռույի և ըռույ ձևերով²:

Ինչպես «քառորդ» բառի իմաստն ունեցող բառերն առհասարակ (հմտ. ոռույերն «четверть» ու պարսկերեն-թուրքերեն «չարեք» բառերը), արարներն «ոռույ» բառն էլ եղել է կշռի կամ չափի անուն: Հայ բարբառներում ըռուր կամ ըռուկ, ըռեկ (= ըռուրիկ), կոշվում է կոտի մի քառորդ³: Մեր ծննդավայրում, Մակվում, ըռուիկ ասում էին չանաղի մի քառորդին⁴: Ղա-րաբաղում մի տեսակ տանձ կա, որին ասում են ոռույների, այսինքն մի ոռույ կշռող (բստ Աճառյանի... ֆնտի 1/4-ին)⁵:

¹ Հ. Աճառյան, Արմատական բառարան, Ե, 1289 ու Магазинск, 811, «Rubu (арабск.)—четверть»:

² «Ռուր» ձևի քաղվածները բերում ենք քիչ հետո: «Ռույի» և «ըռույի» ձևերը տալիս է նաև Գոշի «Դատաստանագիրքը»: «Թասուն ի չորսն մէկն տաի, զոր և այժմ ոռույի (вар. ըռույ) կոչեն»: (Մխիթարյան Գոշի Դատաստանագիրք հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 287, ծանոթ. Ին): Մեր դրականության մեջ մենք մինչև այժմ միմիայն մեկ տեղ «ոռույ» բառի փոխարեն հանդիպել ենք «սեթույ» բառին. «Յրեանցի Սարգսի որդի Մհեր անուն հայ մի զերեք սեթույ (որ է մէկ զանկի երեք բաժինն) մուլքն զեղծս ծախէ Ազէքսանդր կաթուղիկոսին Ջուղայեցւոյ տաան և մէկ թումանով» (1844-րդ, էջ 115, հմտ. նաև էջ 262): Արդյոք սեթույ նոր բառ է, թե ոռույ բառի նոր փոփոխակը:

³ Աճառյան, Արմատական բառարան, Ե, 1289 ու Ս. Վ. Արմատսկի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 198:

⁴ Մակվի սոմարը, որ հավասար էր 4 փթի կամ 64 կիլոյի, ուներ 12 չանաղ, չանաղն էլ ուներ 4 ըռուիկ:

⁵ Աճառյան, Արմատական բառարան, Ե, 1289 ու նույնի՝ Հայերեն զավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 949: Ի դեպ, հայերենում «քառորդ» զաղափարն արտահայտող բառերի հաճորդական ցանկը մինիստրուր ձևով ցույց է տալիս հայոց լեզվի կրած ազդեցությունների պատմությունը:

ա) Բուն հայերեն—բառուր (այլև չորրորդ նույն իմաստով):

բ) պարսկերեն—թասու (Աճառյան, Արմատական, Բ, 1144. սխալվում է Աճառյանը՝ թասուն դրամ համարելով, քանի որ թասուն կշռաբար էր ու հաշվանուն, ինչպես և գա-րեհատը):

գ) արաբերեն—ռուա, ոռույի և այլն:

դ) պարսկերեն-թուրքերեն—չարեկ, չարեք (Աճառյան, Արմատական, Ե, էջ 733—734):

ե) ոռուսերեն—չեսովբու, չերու (օրինակ, ասում էին, մի չերու շաբար և այլն):

Հունարենից հայերենը քառորդի զաղափարն արտահայտող բառ չի վերցրել, բայց առել է «չորսի» զաղափարի հետ կապված բառ—«տետր» բառը (հունարեն τετρας, որ նշանակում է չորսթեղանի. Աճառյան, Արմատական, Զ, էջ 872—873): Շատ հետաքրքրա-կան է, որ մեր վաճառականներին սպասարկելու համար հրատարակված գրականության մեջ պատահում ենք նույնիսկ արեմտյան եվրոպացիներից վերցրած կարտ բառին (լատի-ներեն quartus—քառորդ): «Մէկ ոսկին 200 բոտակ է. 50 ստակն, որ է մին կարտ. 100 ստակն, որ է երկու կարտ կամ կէսն. 150 ստակն, որ է երեք կարտ... Մառչիլն 100 ստակ է. 25 ստակն, որ է մին կարտ. 50 ստակն որ է կէսն կամ երկու կարտ. 75 ստակն, որ է երեք կարտ... թումանն 10.000 դրան է. 2500 դրանն, որ է մին կարտ. 5000 դրանն, որ է կէսն կամ երկու կարտն. 7500 դրանն, որ է երեք կարտն... Մին կարտն քսան և հինգ (sic.) սաղ ստակ է, Բ կարտն յիսուն ստակ է. երեք կարտն եօթանասուն և հինկ ստակ է. զէրէ մին մառչիլն հարիւր սաղ ստակ է»: («Արհեստ համարողութեան: Ամբողջ և կատա-րեալ: Թարգմանեցաւ ի պէտս հայկազունեաց և մանաւանդ վաճառականաց» ի Մարչիլեայ, 1675, էջ 80 ու 96: Սրանով ընդհանուր գծերով լրանում է հայերենի կրած ազդեցու-թյունների շղթան. բառուր—(տետր)—բասու—ռուալ—չարեք—կարտ—չերու:

Սակայն ուսպ բառը գործ է ածվել նաև այլ իմաստով: Ինչպես որ հին հույները *τεταρτη-
γρον* (քառորդ, քառորդամաս) ասելով հասկանում էին նաև իրենց զրամի-որոշոսի $\frac{1}{4}$ -ը¹:
Տաճկաստանում շարեր (քառորդ) ասելով հասկանում էին իրենց զրամներից հատկապես մե-
կի—20 զուռուշանոց—մեջիդիերի $\frac{1}{4}$ -ը (=5 զուռուշ), որտեղ *четвертак* (քառորդ) ասե-
լով հասկանում է ուրբու $\frac{1}{4}$ -ը կամ 25 կոպեկ, այնպես էլ արաբերենն ուսպ, որը կամ ուսպի
բառը գործ է ածվել իբրև զրամանուն՝ նշելով մի զրամ, որ հավասար է եղել մի ավելի բարձր
փողի $\frac{1}{4}$ -ին:

Այս իրողությունը հաստատվում է մի շարք աղբյուրներով:

XVII դարում Հակոբ Կարնեցին նկարագրելով յուր ծննդավայրի արդյունքների ու մթեր-
քների առատությունն ու էծանությունը, գրում է.

«Եւ է երկիրս այս յոյժ լիութիւն հացի, մսի, եղի և գինւոյ. փայտ, աղ և մեղր անասելի և
անպատմելի, զի Կ (60) ոտք երկայն փայտն և գրկաշափ լայն և հաստ փիճի փայտն՝ մէկ զու-
ռուշ, որ մինչև ի ծայրն ոստ չկայ, որ ի տեսանելն մարդ հիանայ և ապուշ մնայ. գառն՝ մէկ
ուսպ, ոչխարն՝ երկու զուռուշ, կովն՝ վեց ուսպ կամ ութն ուսպ. ձի և եղն, էշն նոյն գնով. եղ
և մեղր՝ կէս կէս զուռուշ մէկ լիտրն» և այլն²:

XVIII դարի հիշատակագիրներից մեկը՝ Հակոբ Գալիբը նկարագրելով ՌԽԶ (1756—1757)
թվականի Տիգրանակերտի սովը՝ տալիս է. բնդհակառակը, թանկության գների մի ցանկ, որտեղ
մենք էլի հանդիպում ենք նույն «բուսպ» կամ «բրուսպ» բառին: Այս ցանկն այնքան հետաքրքրա-
կան է գների պատմության տեսակետից, որ մեք ենք բերում ամբողջությամբ, գներն իրար տակ
գրելով:

«Ոչ միայն հացի էր սովն այլ ամենայն ուտելիաց...»

Չարեկ մի ցորեան — Կ (60) զուռուշ,

Լիտր մի հաց — երեք դր.

Լիտր մի բրինձ — չորս դր.

Լիտր մի պանիր — Ժ (10) դր.

Հատ մի հավկիթ — չորս փարայ,

Հաւ մի — Ե (5) բուսպ,

Լիտր մի սոխ — երկու զուռ.

Լիտր մի բոդկ — Ծ (50) փարայ,

Լիտր մի ձմեռան դդում — Ծ (50) փարայ.

¹ А. Д. Вейсман, Греческо-русский словарь, С. Петербург, 1899, էջ 1237:

² Հակոբ Կարնեցի, Տեղեկագրություններ Վերին Հայոց, հրատ. Կ. Կոստանյանց, Վա-
ղարշապատ, 1903, էջ 41—42: Հակոբ Կարնեցու այս հատվածում «ոչխարն՝ երկու զու-
ռուշ» ընթերցվածը մեղ կասկածելի էր թվում հետևյալ պատճառով: Երբ ընդունում էինք,
որ սուսպը հավասար է զուռուշի $\frac{1}{4}$ -ին, ստացվում էր գների հետևյալ շղթան. գառ՝ $\frac{1}{4}$
զուռուշ, ոչխար՝ 2 զուռուշ, կով՝ $\frac{6}{4}$ զուռուշ կամ $\frac{8}{4}$ զուռուշ (այսինքն կով $1\frac{1}{2}$ զուռուշ
կամ 2 զուռուշ): Դուրս էր գալիս, որ ոչ միայն ոչխարը գառից 8 անգամ թանկ է, այլ,
ավելի արտաոտցը, որ կովը ոչխարից էծան է կամ թե ծայրահեղ պեպրում՝ հավասար-
արժեք է: Իսկ երբ ընդունում էինք, որ սուսպը ոսկու $\frac{1}{4}$ -ն է, այսինքն 25 փարա է (հի-
շեցեք, որ XVII դարի երկրորդ կեսում տաճկական ոսկին հավասար էր $2\frac{1}{2}$ զուռուշի
կամ 100 փարայի («Բիվան» Ժ, 114), այն ժամանակ ստացվում էր գների այսպիսի շղթա՝
գառ՝ 25 փարա, ոչխար՝ 2 զուռուշ (=80 փարա), կով՝ 150 փարա (=3 զուռուշ 30 փարա)
կամ թե 200 փարա (=5 զուռուշ): Այս դեպքում թեև ոչխարի ու կովի գների առաջվա
անհեթեթ հարաբերությունը չկար, բայց թվում էր, թե էլի կովը թերագնահատված է:
Ստուգման համար գիմեցիներ ձեռագրի համեմատություն: Երևանի Պետական թանգարանի
ձեռագրատան № 674 ձեռագիրը, որ Հակոբ Կարնեցու աշխատության շատ արժեքավոր
փոփոխակ է (տեղագրությունից առաջ ունի Կարնեցու մի շարք տարեգրություններ ու
նրանց ընտանիքի պատմությունը), էջ 33-ր սյունակում տալիս է այսպիսի ընթերցված.
«Պոտք երկայն և գրկաշափ մի հաստ փիճի փայտն Լ զուռ. որ մինչև (sic.) ի ծայրն ոստ
ոչ զոյ, որ տեսանելն մարդ հիանա (sic.) և ապուշ մնա (sic.). գառն Լ ըսուպ. ոչխարն Բ
բուսպ. կովն 2 և կամ Ը բուսպ. ձի և եղն նոյն գունակ. եղ և մեղր լիտր կէս զուռուշ:
Այստեղ ոչխարի գինն այլևս զուռուշով չի տրված, այլ ուսպով, և գների շղթան ներ-
կայացնում է այս կերպ. գառ՝ 1, ոչխար՝ 2, կով՝ 6 կամ թե 8:

Լիտր մի շողգամ — դռշ. մի.

Լիտր մի սխտոր — ժՍ (15) դռշ.

Լիտր մի բանջար — երեք ըրուպ և

Լիտր մի խնձոր — ժԻ (12) դռշ.

Չարեկ մի գարի — իՆ (34) դռշ.

Չարեկ մի կորեկ — Խ (40) դռշ.

Չարեկ մի սիսեռ — Խ (40) դռշ.

Չարեկ մի ոսպ — իԲ (32) դռշ. և այլն, սոյնպէս իմաստիք ըստ կարգին¹:

Դարձյալ XVII դարում Ղուկաս Վանանդեցին պանազան Լրկրենբրի փողերը թվելիս երթ խոսում է Սպանիայի դրամների մասին, գրում է ի միջի այլոց.

«16 բուարտն, 1 ռիալ դի փլատայ է, կէս ռուբ²»:

Նույն հեղինակը խոսելով Տաճկաստանի դրամների մասին, թվարկում է. «Հոռմացտան 15 մառչիլն 1 թուման է, 3 զոլոթն 2 ասլունլու է, ասլանլուն 110 ստակ է, 3 թուղթ, 4 ռուբ, 6 թնկրը, 10 թիմին³»:

Վերջապես բերենք մի քառյակ մեկ «հայրեններից», որտեղ հիշատակվում է նույն գրամանումը.

Այս աստընվորին վրա

Սիրոյ տէրն ամէն ինչ կու շահի.

Ռուպի մի վաճառ հանէ,

Հազար դեկան կու լինի⁴:

Հակոբ Կարենցու, Հակոբ դպրի, Ղուկաս Վանանդեցու հատվածներն ու «հայրեն» քառյակը ոչ մի կասկած չեն թողնում, որ ռուպը կամ ռուպին դրամանուն է և որ 4-րդ հատվածի սկզբում բերված պարբերությունների մեջ խոսքը վերաբերում է խարաջի կտորի կամ հարամ խարաջի դրամական գրույթին:

ՌՃԽԸ (1698—1699) թվականին ավելագիր գլխահարկ գանձվել էր մեկ ըրուպի չափով:

Դժբախտաբար մեր ձեռքին աղբյուրներ չկան որոշելու համար, թե ռուպը կամ ռուպին կոնկրետ ինչ գրամ էր:

Աշխատություն 4-րդ հատվածում տեսանք, որ ՌԵԽԸ (1698—1699) թվականի տակ տարեգիրք հաղորդում էր, թե «Վանայ կուլ մարդագլուխ ԸՌՄ առեց հայուց»:⁵ Մենք նշեցինք, որ այս ընդ բառը պետք է վերծանել ըրուպ մ', այսինքն մի ռուպ: Այժմ պետք է ավելացնենք, որ «Դիվանի» ժ գլխում հիշյալ կտորը տպված է այսպես.

«ՌՃԽԸ (1699) Վանայ կուլ մարդագլուխ ԸՌՄ (դահեկանի մի շորրորդ) առեց հայուց»:

«Դիվանի» ժ հատորը, որից բաղում ենք այս հատվածը, գիտական հրատարակություն չէ, ինչպես որ չեն մյուս հատորներն էլ: Ուստի մենք հնարավորություն չունենք որոշելու, թե «ըրուպ մ'» կամ թե «ըրուպ» բառի դիմաց փակագծի մեջ գրված «դահեկանի մի շորրորդ» բացատրությունը արդյոք տարեգրի⁶ն է, լնդորինակողի⁷ն, թե՞ հրատարակչի⁸ն: Այս բացատրության արժողությունը խոշոր կլինեք, եթե բխած լինեք տարեգրից, և բոլորովին այլ, եթե պատկանելիս լինեք լնդորինակողին կամ թե հրատարակչին: Բայց և այնպես այս անորոշության դեպքում էլ պետք է հավաստենք, որ ռուպն իբրև դրամական միավորի քառորդ հասկանալը ճիշտ է միանգամայն:

Անանուն բացատրողի կարծիքով ռուպը «դահեկանի» մի շորրորդն է:

¹ «Դիվան», ժ. էջ 200—201 (3ակովք դպիր):

² Ղուկաս Վանանդեցի, Գանձ չափոյ, կշռոյ, թրոյ և դրամից բոլոր աշխարհի, Ամստերդամ, 1699, էջ 25 (վրիպակ՝ 52):

³ Նույն տեղում, էջ 26:

⁴ «Նահապետ Քուչակի դիվանը», հրատարակեց Արշակ Չոպանյան, Փարիզ, 1902, էջ 71, ճժԵԵ, այլև Մ. Արեղյան. Հին ժողովրդական գուսանսական երգեր, Երևան, 1931, էջ 200 (վրիպակ՝ ՃժԵ): Քառյակի իմաստն այն է, թե այս աշխարհում ամեն ինչ շահում է աջողակ սիրո տերը, սա առուտուրի մեջ գնում է մի շնչին դումար, մի ռուպի, որը դառնում է հազար դեկան, հազար ոսկի: Չոպանյանը, որ հատորին կցել է բառարան, սրա մեջ չի մտցրել ռուպի բառը: Արեղյանն էլ անցել է առանց բացատրելու:

Բայց տաճկական դրամական ո՞ր միավորն է այստեղ հասկացվում «դահեկան» անվան տակ: Եթե մենք իմանայինք, թե անանուն բացատրողն ով է, որ դարաշրջանի մարդ, ապա գործի կհեշտանար: Այս կովանից գուրկ լինելով ստիպված ենք դիմելու կողմնակի պրպտումներին:

Հայտնի է, որ մեր նոր դրականության մեջ սովորական էր դուռուշ բառի փոխարեն դահեկան բառը գործածել: Այս կիրառությունը գտնում ենք վերջին դարերում էլ:

Այսպես, օրինակ, մինչդեռ տարեգիրներից ոմանք գրում են.

«ՌՃՂԲ (1742—1743)... մեծ թանգութիւն եղև. քիւլ ցորեն հարիւր դուռուշ ծախուաւ»¹:

«ՌՄԷ (1757—1758)... հաց շատ խիստ սուղ էր. ցորեն 40 դուռուշ»²:

«ՌՌԷ (1757—1758)... սկսաւ սով սաստիկ լինել... ցորենի քիւլն է (7) դուռուշէն վազեաց ցժե (15) դշ. և ի Ին (25) դրշ. և զկնի սակաւ աւուրց է (30) և Խ (40) և ապա Մ (50) և մինչև ցվաթսուն դուռուշ եգիտ տեղի»³:

Պարիշ տարեգրության հատվածներում կարդում ենք.

«ՌՄԶ (1756—1757)... եղև սով սաստիկ... մինչև մէկ քիւլ ցորեն 30 դահեկանի վաճառել»⁴:

«ՌՄԽԶ (1796—1797)... եղև սով սաստիկ, որ մի քիւլ ցորեն երեսուն և հինգ դահեկանի վաճառեցաւ»⁵:

«ՌՄԿԲ (1812—1813)... տիրեաց սովն... վաճառեցաւ քիւլ ցորեն 75 և ավելի ևս 85 դահեկանի»⁶:

Այնպես է, որ այս հատվածներում դուռուշ ու դահեկան գործ են ածված իբրև հոմանիշ բառեր:

Սակայն մենք դժվարանում ենք ռուպն իբրև անպայման դուռուշի և ոչ թե մի այլ դրամի բառորդ ընդունել հետևյալ երկու նկատառումով:

Նախ՝ չպետք է աչքաթող անել, որ ոչ միայն հնադարում, այլև նոր դարերում էլ դահեկան բառը գործ է ածվում ոսկեդրամի իմաստով: Իբրև օրինակ, մենք կմատնանշենք մի հատված XVII դարի տարեգիր Վարդան Բաղիշեցու պատմածից, որտեղ կարդում ենք.

«ՌԺԶ (1656—1657)... ազգն հոռոմոց երկարնակաց քաղկեդոնականաց... մտին առ թագաւորն սուլտան Մահմէտ և ետուն երկու հարիւր հազար դուռուշ, այսինքն հարյուր հազար դահեկան կարմիր և աղաչեցին զթագաւորն, զի տացլ նոցա զեկեղեցին հայոց, զվանս սրբոյն Յակոբայ...»⁷:

Այն հատվածում արդեն դուռուշն ու դահեկանը տարբեր դրամներ են: Երկու դուռուշը հավասար է մեկ դահեկանի, որը կարմիր⁸ է. այսինքն ոսկի:

Երկրորդ՝ Հակոբ Կարնեցու և Հակոբ զպրի հատվածներից այն տպավորությունն է ստացվում, որ ռուպը ոչ թե դուռուշի, այլ մի ուրիշ դրամի քառորդն է: Եթե ռուպը դուռուշի քառորդն էր, ինչո՞ւ Կարնեցին ասում է, թե կովի գինը վեց ռուպ էր կամ թե ութ ռուպ՝ փոխանակ ասելու, թե դուռուշ ու կես էր կամ երկու դուռուշ, ինչպես որ ասել էր, թե մի գերանն արժէր մեկ դուռուշ, կամ թե յուրի ու մեղրի իտոր՝ կես դուռուշ: Ինչո՞ւ Հակոբ զպրի գնների ցանկում մեկ ատում է, թե լիար մի բողկ՝ 50 փարա, լիար մի ձմռան դրամ՝ 50 փարա, իսկ հետո էլ թե՛ հավ մի՝ 5 ռուպ, այնինչ այս դեպքում էլ կարող ենք ասել — հավ մի՝ 50 փարա: Ինչու նույն այս մատենագիրը, որ գները տալիս է նաև դուռուշներով ու փարաներով, հանկարծ նորից

1 Դիվան, Ժ, էջ 136 (Յարութիւն Խալիֆայական ժամանակագիր):

2 Նույն տեղում, էջ 138 (Յարութիւն Խալիֆայական ժամանակագիր):

3 Նույն տեղում, էջ 196—197 (Յակովբ զպիր):

4 Նույն տեղում, էջ 418 (Յահաննէս Սերաստացի պատմիչ):

5 Նույն տեղում, էջ 423 (Յահաննէս Սերաստացի պատմիչ):

6 Նույն տեղում, էջ 430 (Յահաննէս Սերաստացի պատմիչ):

7 Նույն տեղում, էջ 79—80 (Մեծն Վարդան Բաղիշեցի):

8 Որ XVII դարի կեսերին կար ոսկու այսպիսի կուրս, այսինքն, որ այն ժամանակ 2 դուռուշ կամ 2 մառչիլը հավասար էր 1 ոսկու, ապացուցվում է հետևյալ հավասարումներով. 1) «Մին մառչիլն հարյուր ստակ է» ու 2) «Մեկ ոսկին 200 ստակ է» («Արուեստ համարողութեան» Ամբողջ և կատարեալ. Թարգմանեցեալ ի պէտս հայկազունեաց և մանաւանդ վաճառականաց» ի Մարշիլեայ, 1675, էջ 80, 96, 123 ու էջ 80):

լեզուն փոխում է և դրում. լիտր մի բանջար՝ երեք բրուպ՝ փոխանակ գրելու — լիտր մի բանջար՝ 30 փարա: Արդյոք այս երեւոյթների պատճառն այն չէ՞ր, որ $1/4$ ղուռուշը կամ 10 փարան ու ռուպը չէին ծածկում իրար:

Այսպիսով առայժմ առկա թողնելով ռուպի՝ որ դրամի բառորդը լինելու հարցը, մենք ամփոփելով մինչև հիմա թվարկված տվյալները, կարող ենք հավաստել, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում ավելադիր գլխահարկ գանձվում էր մեկ ղուռուշի, կես ղուռուշի ու մեկ ըռուպի չափով:

Հարույթուն Խալֆայանի «Տարեգրութիւնը», որ այնքան կարևոր տեղեկութիւններ է տալիս տաճկական գլխահարկի մասին, ունի նաև մի այսպիսի լակոնական ու հանելուկային հատված:

ՌՄՃԽ (1690—1691)... Ի տոյն թվին սուլթան Սուլեյման առաքեաց վայվատայ Ի քաղաքս Վան և թղթով ժողովեաց գլխարաջն. ալայ, աւսատ, աւնայ»¹:

Էլ ուրիշ ոչինչ:

Այսքանից իմանում ենք միայն, որ սուլթանը ոչ թե տեղական փաշայի կամ թե կայազորի (ղուլի) մեծերի միջոցով ու այն էլ առանց հարկատուների է հավաքել գլխահարկը, այլ ուղարկել է հատուկ լիազոր վոյվոտա և թղթով էլ ժողովել խարաջը: Հատվածում պակասում է հիշատակութիւն այն մասին, թե արդյոք խարաջն ի՞նչ չափով գանձվեց: Այս բովանկան չէ, Կողքին տրված են ինչ-որ առեղծվածային, մինչև օրս չբացատրված ու չլուսարանված բառեր, — ալայ, աւսատ, աւնայ:

Ի՞նչ են նշանակում այս բառերը:

Կապ ունենալ արդյոք նրանք գլխահարկի հետ և եթե ունեն, ինչպիսի՞նք:

Սրանից մի քանի տարի առաջ երբ այս մասին հարցում արի մեր անվանի լեզվաբան Հրաչյա Աճառյանին, սա անթվական մի տոմսով սիրահոժար պատասխանեց հետևյալը.

«Ալայ. պետք է կարգալ ըստ հին հնչման ալա, նշանակում է՝ «բարձրագույն»:

«Ավսատ (կարգա avsat) նշանակում է «միջին»:

«Աւնու (կարգա adna, edna) նշանակում է «ստորին»:

Այսքանից կարելի էր կռահել, թե հիշյալ բառերը շնչում են ինչ-որ աստիճանավորման ստորակարգման մասին, որ սահմանվել էր թերևս հարկը գանձելիս: Բայց ուղղակի ցուցմունքների պակասում էին դեռևս:

Այս տարի, երբ ձեռքս բերեցի «Տաճկերեն-հայերեն բառարանը», տվյալներն ավելի կոնկրետացան: Պարզվեց, որ երբ բառն էլ արարերեն են, և երբն էլ գործ են ածված եղել իբրև հարկային տերմիններ էլ:

Ալա, որ նշանակում է լավագույն, ազնիվ բարվոք, է հարկ մեծատանց և ի չափ հասելոց»:

Էվսաթ, որ նշանակում է չափավոր, միջինը, է հարկ միջնոց կարգի մարդկան»:

Էւնա, որ նշանակում է անարգ, տրուպ, նվաստ, է խոնարհագույն հարկ (պատանեկաց և աղքատաց)»²:

Այլևս կասկած չէր մնում, որ տարեդրի թվարկած խորհրդավոր բառերը հիշյալ կապակցությամբ նշում էին աստիճանավորում ու ստորակարգում գլխահարկը սահմանելու և գանձելու ասպարեզում: Ակնհերե էր, որ խոսքը վերաբերում էր տարբեր դրույքներով գանձվող միաժամանակյա գլխահարկին կամ ավելի կարճ ասած՝ տարբերական գլխահարկին: Բայց դարձյալ պակասում էին որոշակի տվյալներ այն մասին, թե հասարակութիւնն ինչ հարարերությամբ էր հարկատու տարբեր խավերի բաժանված, և հետո թե սրանք ինչ կոնկրետ դրույքներով էին տարբերական գլխահարկ վճարում:

Բարեբախտաբար մեր մատենագրութիւնն ընձեռում է մեզ մի աղբյուր, որ տալիս է նաև այս հարցերի պատասխանը, որն այնքան կարևոր է տաճկական գլխահարկի ուրվագիծն ամբողջացնելու տեսակետից:

Այս աղբյուրը հայոց նոր գրականութեան նշանավոր հիմնադիրներից մեկի՝ Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի Յորդորակ» գիրքն է:

¹ «Դիվան», Ժ, էջ 126:

² Հակոբոս վրդ. Պողոսյան, Համառոտ բառարան տաճկերեն—հայերեն, Բ տպագրութիւն, Վիեննա, 1858, էջ 9 ու 10, 163, 164—165:

Բաղրամյանը «Հորդորակում» խոսք բանալով ի միջի այլոց նաև տաճկահայերի վճարած գլխահարկի մասին, XVIII դարում գրում է.

«Յորոց ամ յամէ լինի անրնդհատ պահանջումն դիմոսականին, որ է գլխահարկ, իսկ ըստ տաճկաց խարաճ, զոր ոմանք հատուցանեն մի ոսկի, և ոմանք՝ երկու, և ոմանք՝ չորք. այս է առաջին, և երկուսն է երկրորդ կամ միջին և մին է երրորդ, իսկ ըստ նոցա ավել, էվսատ և էտնա, որ է յետին մի ոսկին»¹:

Բաղրամյանի հաղորդած տեղեկություններն ու պատիշ են միանգամայն: Դեմոսական, այսինքն խարաճ կամ գլխահարկ վճարող հատարակությունը Տաճկաստանում բաժանվում էր երեք կատեգորիայի. ամեն մի վերին կատեգորիան տալիս էր ստորինի կրկնապատիկը, իսկ ամենավերինն՝ ամենաստորինի քառապատիկը: Հետին, այսինքն ստորին խավը վճարում էր մեկ ոսկի, միջինը՝ երկու, իսկ առաջին, այսինքն ամենավերին խավը՝ չորս ոսկի: «Ըստ նոցա», այսինքն՝ տաճկերեն, այս կատեգորիաները վերևից ներքև կոչվում էին ավել, էվսատ ու էտնա:

Այսպիսով հանելուկային թվացող բառերի իմաստը պարզվում է լիովին, և XVII—XVIII դդ. բերում տարբերական գլխահարկի իրողությունը՝ հաստատվում²:

Եթե մենք Բաղրամյանի տեղեկությունների վրա հիմնված կարող ենք ասել, թե Տաճկաստանում տարբերական գլխահարկի ինչպիսի դրույքներ կային XVIII դարի երկրորդ կեսում, ապա դժբախտաբար պակասում են տվյալներ այն մասին, թե ինչպիսի դրույքներով էր վճարվում տարբերական գլխահարկն ավելի առաջ ու թեկուզ հենց այն ժամանակ, երբ առաջին անգամ մեր տարեգրությունը հիշատակում է խարաջի գանձումն ավա, ավսատ ու ադնա կատեգորիաներով, այն է XVII դարի վերջին:

Մնում է անել ենթադրություններ, որոնք կարող են կովան ու նշանաձող ծառայել հետագա ճշտումների համար:

Դենք իրար կողքի երկու հիշատակություն:

Մենք տեսանք, որ Հարություն Խալֆայանը գրում էր. թե

«Ռճե (1690—1691) ... ի սոյն թվին սուլթան Սուլեյման առաքեաց վայվայտա ի քաղաքն Վան և թղթով ժողովեաց զխարաջն. ալայ, ավսատ, առնայ»:

Բայց 2-րդ գլխում մենք մեջ էինք բերել մի ուրիշ տարեգրությունից քաղված, որտեղ հիշատակվում էր. թե

«Ռճե (1690—1691) սուլթան Սուլեյման առաքեաց վոյվոտա ի քաղաքն Վան, որ Լեհալ քաղաքի խարաջն ժողովեաց մէկ մէկ ոսկին»:

Առադրությունն իսկույն ցույց է տալիս, որ երկու տեղեկությունն էլ վերաբերում են միևնույն թվականին, միևնույն սուլթանին, միևնույն քաղաքին ու միևնույն հարկի գանձմանը: Տարբերությունն այն է, որ մինչդեռ առաջին տարեգրին իրազեկ է տարբերական գլխահարկ մուծելու իրողությանը, երկրորդն այս մասին չգիտե, և հաղորդում է գլխահարկի յուր իմացած դրույքի մասին, որ է մեկ ոսկի:

Հավանական չէ՝ ենթադրել, որ երկրորդ տարեգրը հաղորդում է գլխահարկի այն դրույքը, որ վճարվում էր ընդհանրապես, այսինքն այն դրույքը, որ տալիս էր հարկատուների ստորին խավը — ադնան, որ անշուշտ մեծամասնություն պիտի կազմեր հարկատուների մեջ:

Համեմատաբար բշրր կարող էին վճարել միջին — ավսատ կատեգորիայով ու էլ ավելի ապավաթիվները՝ վերին — ալա կատեգորիայով: Ի՞նչը պիտի տարեգրին դրդեր տալու այս ավելի հարուստ խավերից որևէ մեկի դրույքը և անտեսելու մասսայական դրույքը:

Մեր կարծիքով՝ հավանականը մասսայական դրույքի հիշատակումն է:

¹ Մովսես Բաղրամյան, Նոր տետրակ. որ կոչի Յորդորակ, Մաղրաս, 1772, էջ 201: Վ

² Մենք հատկապես շեշտում ենք XVII—XVIII դարերն այն պատճառով, որ տարբերական գլխահարկի՝ XIX դարում մտցրած լինելու համար մեջ է բերվում նույնիսկ կոնկրետ թվական:

Տարբերական գլխահարկ մտցնելու թվականը մեր մեջ բերած տվյալների ներգործությամբ, պետք է հետ տանել առնվազն մինչև 1690—1691 թ., այսինքն մոտ 150 տարի:

Եթե այս այսպես է, ապա 1690—1691 թվականի տարբերական գլխահարկի տոորին դրույքը, որ է մեկ ոսկի ու XVIII դարի երկրորդ կիսում Բաղրամյանի հաղորդած տարբերական դրլխահարկի տոորին դրույքը, որ է դարձյալ մեկ ոսկի, նույնանում են: Այս դեպքում հավանական է ենթադրել, որ մյուս դրույքներն էլ նույնանում էին, այսինքն 1690—1691 թվականին էլ միջին խավը վճարում էր երկու ոսկի ու վերին խավը՝ չորս ոսկի, ինչպես որ էր XVIII դարի երկրորդ կեսին էլ:

Ուսումնասիրողի համար մեծ բարեբախտություն է, որ թե 1690—1691 թվականի մասին խոսող տարեգիրն ու թե Բաղրամյանը տալիս են իրենց ժամանակվա ոսկու կուրսն էլ:

2-րդ գլխում տեսել ենք, որ ըստ տարեգրի, ոսկին այն ժամանակ արժեր 2 զուռուշ ու կես: Իսկ Բաղրամյանը գրում է.

«Սի ոսկին արժէ չորս մառչի»:

Այս տվյալներից ելնելով ստանում ենք.

1690—1691 թվականի տարբերական գլխահարկի դրույքները

ադնա — 1 ոսկի = 2,5 զուռուշ,

ավսատ — 2 ոսկի = 5 զուռուշ ու

ալա — 4 ոսկի = 10 զուռուշ:

XVIII դարի երկրորդ կեսի տարբերական գլխահարկի
դրույքները

ադնա — 1 ոսկի = 4 զուռուշ

ավսատ — 2 ոսկի = 8 զուռուշ

ալա — 4 ոսկի = 16 զուռուշ:

Այս գումարների մասին ճիշտ գաղափար կազմելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ թե տաճկական ոսկին ու թե զուռուշն իրենց դրամարժեքներով շատ մեծ փոփոխությունների են ենթարկվել դարերի ընթացքում: Այսպես, մինչդեռ XIX դարի վերջերին և XX-ի առաջին տասնամյակներում տաճկական ոսկին հավասար էր 108 զուռուշի, զուռուշն էլ անում էր ռուսական 8 կոպեկ, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում տաճկական ոսկին հավասար էր նախ երկու զուռուշի, հետո երկուս ու կես զուռուշի, ապա՝ մինչև իսկ 4 զուռուշի, իսկ զուռուշն էլ կլոր հաշվով անում էր $66\frac{2}{3}$ ռուսական կոպեկ:

Տաճկական հիմնական գլխահարկի, ավելագիր գլխահարկի, տարբեր գլխահարկի դրույքների մասին կոնկրետ գաղափար կազմելու համար անհրաժեշտ էր հիշյալները վերածել ռուսական դրամների՝ նկատի ունենալով տաճկական ոսկու և զուռուշի հին ու համապատասխան կուրսերը: Տեղի սղության պատճառով մենք ավելորդ ենք համարում հիմնական ու ավելագիր գլխահարկերի դրույքների վերածումը ռուսական դրամի և բավականանում ենք միմիայն տարբերական գլխահարկի դրույքները ռուսական դրամներով ներկայացնելով:

1690—1691 թվականի տարբերական գլխահարկի դրույքներն այն ժամանակվա
ռուսական դրամներով.

Ադնա — 1 ոսկի — 2,5 զուռուշ — 1 ռուբլի $66\frac{2}{3}$ կոպեկ,

ավսատ — 2 ոսկի — 5 զուռուշ — 3 ռուբլի $33\frac{1}{3}$ կոպեկ ու

ալա — 4 ոսկի — 10 զուռուշ — 6 ռուբլի $66\frac{2}{3}$ կոպեկ:

XVIII դարի երկրորդ կեսի տարբերական գլխահարկի դրույքներն այն
ժամանակվա ռուսական դրամներով.

Ադնա — 1 ոսկի — 4 զուռուշ — 2 ռուբլի $66\frac{2}{3}$ կոպեկ,

ավսատ — 2 ոսկի — 8 զուռուշ — 5 ռուբլի $33\frac{1}{3}$ կոպեկ ու

ալա — 4 ոսկի — 16 զուռուշ — 10 ռուբլի $66\frac{2}{3}$ կոպեկ:

1 Մ. Բաղրամյան, *Նույն տեղում*, էջ 201:

Համեմատական ուսումնասիրության սեփականության հետաքրքրական է առաջին տաճկական զինահարկի այս դրույքները մի կողմից պարսկական զինահարկի ու մյուս կողմից ռուսական շնչահարկի՝ մեզ հայտնի դրույքների հետ:

Պարսկական զինահարկի չափի մասին մեզ տեղեկություն տալիս է նույն Մովսես Բաղրամյանը:

«Իսկ պարսից ի մենջ զինահարկին պահանջումն է առհասարակ 2000 բնիոն կամ լումաշ, որ րստ նոցա ասի դինար կամ դիան»¹:

Պարսից 2 հազար դիանն այն ժամանակ հավասար էր ռուսական 2 ռուբլու:

Հստ Բաղրամյանի՝ XVIII դարի երկրորդ կեսին պարսից զինահարկը տարբերական չէր. այլ գանձվում էր «առհասարակ», իրեն ընդհանրական զինահարկ 2 ռուբլու չափով: Հարույն Արարատյանի հաղորդածը մի քիչ տարբեր է սրանից:

«Մեզանում, — գրում էր Արարատյանը 1790-ական թվականների վերաբերմամբ, — հարկ (այսինքն զինահարկ — Թ. Ա.) վճարում են ամուսնացածները շորս, իսկ ամուրիներն երկու մանեթ»²:

Մինչդեռ պարսկական զինահարկն ընդհանրական էր, գանձվում էր «առհասարակ» և շուրջներ ավելադիր գանձելի դրույքներ էլ, ռուսական շնչահարկը, որ առաջին անգամ մուծվել էր Պետրոս I-ի ձեռքով, ուներ թե հիմնական, թե ավելադիր և թե տարբերական դրույքներ:

Հայտնի պատմաբան Վ. Օ. Կլյուչևսկու տվյալների համաձայն, XVIII դարի առաջին րառորդում (1725 թվականին) ռուսական ճորտ գյուղացիությունը վճարում էր ընդհանրական շնչահարկ մարդագլուխ 70 կոպեկ, միներդավորներն (однодворцы) ու պետական գյուղացիները լրացուցիչ վճարում էին մարդագլուխ 40 կոպեկ (ուրեմն ընդամենը 110-ական կոպեկ), իսկ քաղաքային հարկատուներն՝ ամենաբարձր դրույքը — 120 կոպեկ³:

Նրևան, 1936:

ПОДУШНАЯ ПОДАТЬ В ТУРЦИИ В XVII—XVIII вв. ПО ДАННЫМ АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

Тад. АВДАЛБЕГЯН

(Р е з ю м е)

Автор на основе армянских первоисточников XVII—XVIII вв. (историографических трудов Абраама Кретацци, Аракела Даврижеци, Симеона Ереванци, Акопа Карнеци и др.) дает количественный анализ подушной подати (харадж) в Турции и приводит интересные данные о наличии и дополнительной подушной подати (чернобор, кара-конак). Основываясь на свидетельствах Мовсеса Баграмяна, автор устанавливает, что платившие харадж разделялись на три категории — адна, авсат, ала. Отнесенные к первой, низшей категории вносили одну золотую монету, ко второй — две, а к третьей — четыре монеты. Далее автор определяет стоимость золотой монеты в Турции в конце XVII века и во второй половине XVIII века.

Статья проливает свет на некоторые стороны экономической жизни Турции XVII—XVIII веков, а также на положение подвластных туркам немусульманских, христианских народов, с которых взималась эта подать.

¹ Խ. Բաղրամյան, էջ 201:

² «Վաղարշապատեցի Հարութին Արարատեանի կեանքը», Թիֆլիս, 1892, էջ 113:

³ В. О. Ключевский, Опыты и исследования, Петроград, 1919, էջ 285—286, ալիւ 275—276: